

Առաջին անգամ, 2005թ. նոյեմբերի 27-ի Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների արդյունքում, Երևան քաղաքում անց են կացվելու ավագանու ընտրություններ: Մայրաքաղաքի՝ ընտրովի իշխանություն ձևավորելու փորձն աշխարհի բազմաթիվ զարգացած պետություններում է ընդունված: Դա առաջին հերթին քաղաքական և բարոյական պատասխանատվություն է համաքաղաքացիների և հանրային լայն շրջանակների նկատմամբ: Երևանը համայն հայության մայրաքաղաքն է և նրա ճակատագրի նկատմամբ անտարբերությունը աններելի վերաբերմունք է ներկա և ապագա սերունդների առջև: Միասնաբար ձևավորենք քաղաքային իշխանություն և պահանջենք երևանցուն արժանի կենսակերպ:

Երևան քաղաքի սոցիալական, տնտեսական, առողջապահական, բնապահպանական, քաղաքաշինության և մյուս բնագավառների կառավարման քաղաքականությունը դեռևս թերի է և իրավիճակային, որի հետևանքով երևանցիներին հուզող հիմնախնդիրները տարեցտարի ավելանում են, չեն լուծվում և կանխատեսելի չէ, թե երբ են լուծվելու:

Այդ իսկ պատճառով «Օրինաց երկիր» կուսակցությունը հրատապ և անհրաժեշտ է համարում քաղաքային նշանակության մի շարք ռազմավարական երկարաժամկետ ծրագրերի մշակումը և իրականացումը, Երևան քաղաքում առկա տարաբնույթ հիմնախնդիրների վերհանումը, ներառյալ՝ քաղաքի բոլոր թաղամասերի, նրանց փողոցների և շենքերի անձնագրերի կազմումը՝ առկա հիմնախնդիրների հստակ գույքագրման և դրանց լուծումների համար կոնկրետ ժամանակացույցի և պատասխանատուների սահմանումով:

Մեր առաջնային ռազմավարական նպատակային ծրագրերը, կարգախոսները և ուղղություններն են՝

«Երևանն առանց աղքատության», որի նպատակն է առաջիկա 4 տարիների ընթացքում նվազագույնի հասցնել չքավորությունը, նոր աշխատատեղերի ստեղծման և բնակչության զբաղվածության ընդլայնման համալիր ռազմավարական ծրագրի մշակումը և իրականացումը:

«Միջնակ և զարգացած մայրաքաղաք» ռազմավարական ծրագիրը, որի մշակումը և ներդրումը երաշխավորում է անկախ սոցիալական վիճակից յուրաքանչյուր երևանցու բարձրագույն և մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը, մշակույթի, գիտության և նոր տեխնոլոգիաների զարգացումը, մատչելի և որակյալ առողջապահական համակարգի ներդրումը՝ նպատակ ունենալով Երևանը դարձնել գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության և նոր տեխնոլոգիաների կենտրոն:

«Մաքուր և բարեկարգ մայրաքաղաք» ծրագրի նպատակը քաղաքի աղբահանության ցավոտ հիմնախնդրի լուծումն է, Երևանի գլխավոր և երկրորդական փողոցների բարեկարգումը և լուսավորումը, քաղաքի բնապահպանական նոր ոճի ձևավորումը, կանաչ ճարտարապետության ավանդույթների վերականգնումն ու զարգացումը:

«Երևանի համաչափ զարգացում» ռազմավարական ծրագիրը մայրաքաղաքի բոլոր թաղամասերի համար նախատեսում է համաչափ զարգացում, Երևանի ճարտարապետաշինարարական, պատմամշակութային, առողջապահական, գիտատեխնիկական, ինովացիոն, կրթական, արտադրական, առևտրային հանգույցների ստեղծում և բարենպաստ բիզնես միջավայրի ձևավորում՝ ոչ թե սոսկ Երևանի կենտրոնում, այլ բոլոր վարչական տարածքներում:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ



Աշխարհի առավել զարգացած մայրաքաղաքների կառավարման մարմինները քաղաքային ենթակառուցվածքների ղեկավարման գործում որդեգրել են ռազմավարական մտածելակերպի և նորարարության արդյունավետ համադրման սկզբունքը: Այս տեսանկյունից, Երևանում քաղաքային կառավարումը պետք է ունենա հետևյալ գերակայությունները.

- համարձակ բարեփոխումներ՝ ուղղված Երևանի զարգացմանը և երևանցիների շահերի պաշտպանությանը,
- քաղաքային կառավարման բոլոր ոլորտների համար ռազմավարական զարգացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մշակումը և իրականացումը, նորարարական մոտեցումների կիրառումը,
- սոցիալական ծայրահեղ բևեռացվածությունից, հուսալքությունից և անտարբերությունից բյուրոկրատական քաշքշուկներից, իշխանության հանդեպ անվստահության մթնոլորտից ձերբազատվելուն ուղղված քաղաքականության իրականացումը քաղաքային կառավարման գործում,
- քաղաքային իշխանության համակարգում ավագանու դերի կարևորումը և բարձրացումը, կառավարման ոլորտում թափանցիկության, վերահսկելիության, պատասխանատվության և կատարողական կարգապահության մեխանիզմների ներդրումը և ամրապնդումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Երևան քաղաքի զարգացման և մրցունակության ապահովումը կարող է հաջողությամբ իրականացվել բացառապես կառավարման համակարգի արդիականացմամբ և բարեփոխմամբ: Քաղաքի կառավարման համակարգը պետք է որդեգրի և կյանքի կոչի «Քաղաքապետարանը ծառայում է երևանցուն» կարգախոսը և հիմնվի հետևյալ սկզբունքների վրա.

- քաղաքացի-քաղաքային պետական ծառայող ուղղակի շփման նշանակալի նվազեցում՝ ծառայողների կողմից չարաշահումները և հնարավոր դրամաշորթումները կանխարգելելու համար,
- էլեկտրոնային կառավարման արագացված համակարգի ամբողջական ներդրում,
- կոռուպցիայի դեմ անհաշտ պայքարի ծավալում,
- մասնագիտական բարձր պատրաստականություն ունեցող, պետական ծառայողի էթիկական վարվելակերպ դրսևորող և բարեխիղճ ծառայողների համար գնահատման համակարգի ներդրում, նրանց ֆինանսական և բարոյական աջակցության ցուցաբերում,
- քաղաքական ազդեցության «հեռախոսային իշխանության» վերացում,
- քաղաքային համակարգի բոլոր աշխատակիցների աշխատավարձերի շարունակական բարձրացում,
- Երևան քաղաքում հանրային ծառայության այնպիսի համա-

կարգի ձևավորում, որը զերծ կլինի կորպորատիվ և կոնյուկտուրային շահերի պաշտպանության գայթակղությունից և ամբողջությամբ կծառայի մայրաքաղաքի և երևանցիների շահերին:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ուղղտի հրատապ խնդիրներն են.



- Երևան քաղաքի կրթության համակարգի զարգացման համալիր ծրագրի մշակումը և իրականացումը, կրթության բնագավառում պետական ներդրումների ամենամյա պարբերական աճի ապահովումը,
- մանկապարտեզներին, դպրոցներին, ուսումնարաններին, քոլեջներին, բուհերին և գիտական հաստատություններին պատկանող շենքերի և շինությունների սեփականաշնորհման բացառումը,
- նախադպրոցական կրթական համակարգի վերականգնումը և մատչելիության ապահովումը յուրաքանչյուր ընտանիքի համար,
- դպրոցների վերանորոգումը, ջեռուցման ժամանակակից համակարգերի ներդրումը,
- դպրոցների և մանկապարտեզների նյութատեխնիկական բազայի վերականգնումը, ուսումնամեթոդական ծրագրերի արդիականացումը, համակարգչային և ինտերնետային ցանցի ձևավորումը,
- գրադարաններում ինտերնետ ցանցի ազատ մուտքի հնարավորությունների ստեղծումը:

ՄՇԱԿՈՒՅԹ

Հայ ժողովուրդը միշտ հպարտացել է իր հարուստ մշակույթով: Մշակութային զարգացումը Երևանի կարևորագույն խնդիրներից մեկն է, նկատի ունենալով, որ մայրաքաղաքային մշակույթը ցանկացած երկրի այցեքարտն է:

Մշակույթի ոլորտում անհրաժեշտ է.

- աջակցել Երևանի պատմամշակութային ժառանգության պահպանմանը,
- նպաստել արդի, ժողովրդական և կիրառական արվեստների ներդաշնակ զարգացմանը, քաղաքային փառատոների և տոնախմբությունների կազմակերպմանը,
- խրախուսել մշակութային նշանակալի գործերի հեղինակներին,
- խորացնել այլ պետությունների մայրաքաղաքների, Երևանի քույր քաղաքների և Սփյուռքի համայնքների հետ մշակութային համագործակցությունը,
- ընդլայնել տարածաշրջանային և միջազգային մշակութային ծրագրերին Երևանի մասնակցությունը,
- վերանորոգել և կահավորել քաղաքային ենթակայության թանգարանները, գրադարանները, երաժշտական դպրոցները, բարձրացնել դրանց աշխատակիցների աշխատավարձերը:

Քաղաքային, հասարակական և մշակութային կազմակերպությունների պարտքն է արժանապատիվ ներկայացնել ու քարոզել երևանյան մշակութային նվաճումները, մայրաքաղաքում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային ձեռքբերում-

ները, դրանով իսկ ընդլայնելով Երևանի համընդհանուր ճանաչումն ու հարգանքը:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Երևանում կուտակված բազմաթիվ հիմնախնդիրների լուծման բանալին նախ և առաջ տնտեսության զարգացումն է: Այդ առումով անհրաժեշտ է առավել արագ նախաձեռնել Երևանում ժամանակակից, ինովացիոն և գիտատար տնտեսության համակարգի ձևավորման գործընթաց, համադրել տնտեսության արդիականացման ավանդական և նորարարական ուղղությունները: Ավանդական տեսանկյունից անհրաժեշտ է քաղաքի տնտեսության հիմնական և հեռանկարային ճյուղերի զարգացման ռազմավարական ծրագրերի մշակում և իրականացում, որի արդյունքում կարող է երաշխավորվել.

- կայուն տնտեսական զարգացման ապահովում և աշխատատեղերի ստեղծում,
- ներդրումների և ներքին խնայողությունների ավելացման համար բարենպաստ տնտեսական միջավայրի ստեղծում,
- փոքր և միջին գործարարության զարգացման ուղղությամբ նպատակային պետական աջակցության քաղաքականության արդյունավետ իրականացում,
- մայրաքաղաքում օտարերկրյա ներդրողներին և հայրենական արտադրողներին հետևողական օգնության և աջակցության ապահովում աշխատատեղերի ստեղծման գործում,
- մայրաքաղաքի տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող ձեռնարկությունների վերագործարկման և զարգացման համար նպատակային ծրագրերի ներդրում:

Նորարարական տեսանկյունից անհրաժեշտ է.

- ինովացիոն, ռազմավարական կառավարման և սոցիալ-տնտեսական կայուն զարգացման, բալանսավորված ֆինանսական պլանավորման համակարգերի և մեթոդների ներդրում,
- տեղեկատվական տեխնոլոգիաների հիման վրա աշխատող մանր և միջին ձեռնարկություններին շուկայագիտական աջակցություն,
- տեղեկատվական քաղաքային միջավայրի ձևավորում,
- նորարարական նախաձեռնությունների, հետազոտությունների աջակցություն, ներդրման և համագործակցային դաշտի ապահովում,
- գիտություն-նորարարություն-արդյունաբերություն միասնական համակարգի ձևավորում:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ



Երևանում մասնավոր, էլիտար շինարարության մեծ մասն իրականացվել է «ոտքը դա փող է» սկզբունքով, ոչնչացնելով կանաչ տարածքները և զանգվածաբար ոտնահարելով քաղաքացիների իրավունքները: Ընդ որում, քաղաքի զարգացման գործընթացում հաճախ են տեղ գտել անհամաչափություններ, ուստի, այս ոլորտում անհրաժեշտ է.

- առանձնահատուկ ուշադրություն դարձնել Երևանի համալիր և հավասարաչափ զարգացմանը,
- քաղաքաշինության ոլորտում ամրապնդել օրինականությունը և կանխել ապօրինի շինարարության բազմազան դրսևորումները,
- պուրակների, զբոսայգիների և այլ կանաչ տարածքների պահպանման համար կիրառել օրենսդրական պաշտպանության կոշտ միջոցներ, անխտիր ներդնել «կանաչ ճարտարապետության» սկզբունքը բոլոր թաղամասերում,
- բացառել քաղաքացիների իրավունքների և շահերի ոտնահարումը կառուցապատման ծրագրերի իրականացման գործընթացում, միաժամանակ քաղաքացիների համար՝ շինություններ կառուցելու ընթացքում չհարուցել արհեստական խոչընդոտներ և բյուրոկրատական քաշքշուկներ, եթե վերջիններս չեն վնասում մյուս քաղաքացիների շահերին՝ թափանցիկ դարձնելով շինարարության համապատասխան ընթացակարգերը և ձևակերպումները,
- առանց քաշքշուկների օրինականացնել երևանցիներին պատկանող բնակելի տներն ու տնամերձ հողատարածքները:

ԿԱՊ, ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏ

Երևանը կարող է և պետք է դառնա տարածաշրջանային հեռահաղորդակցման խաչմերուկ:

Ուստի հարկավոր է.

- մշակել մայրաքաղաքի համընդհանուր համակարգչային ցանցի ընդլայնման ծրագիր,
- քայլեր ձեռնարկել ինտերնետ ծառայությունների ցանցի առաջընթաց զարգացման ուղղությամբ,
- ապահովել քաղաքացիների համար այդ ծառայությունների հասանելիության ընդլայնումը, ոլորտում ենթակառուցվածքների ստեղծումը և անընդհատական կրթությունը,
- ավելացնել ավտոբուսների և տրոլեյբուսների քանակը, մշակել և իրականացնել հասարակական տրանսպորտի վիճակի բարելավման նպատակային ծրագիր,
- շարունակել ժամանակի պահանջներին համապատասխան ստորգետնյա և վերգետնյա ավտոկայանատեղիների կառուցման գործընթացը,
- վերսկսել Երևանի մետրոպոլիտենի կիսակառույց կայարանների շինարարությունը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Սոցիալական քաղաքականությունը մայրաքաղաքում դեռևս չի համապատասխանում իր առաքելությանը՝ սոցիալական համերաշխության և արդարության կայացմանը: Քաղաքապետարանի կողմից իրականացվող սոցիալական քաղաքականությունը՝ մի կողմից ֆինանսական միջոցների անբավարարության և մյուս կողմից գործող վարչարարության մեխանիզմների անկատարության պատճառով, ոչ միայն չի նպաստում կուտակված հիմնախնդիրների լուծմանը, այլև տարեցտարի խորացնում է սոցիալական բևեռացումը: Սոցիալական աջակցության և օգնության գործող համակարգի արդյունավետությունը խիստ ցածր է, թույլ է հասցեականությունը, որը հաճախ հիմք է դառնում սոցիալական արդարության սկզբունքի խախտման համար:

Այսօր Երևանում անհրաժեշտ է մշակել և իրականացնել նոր սոցիալական ռազմավարություն և քաղաքականություն, որը էականորեն կբարելավի սոցիալապես առավել խոցելի խավերի և խմբերի վիճակը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ



Երևանի բնակչության լիարժեք, հատկապես՝ մասնագիտացված բուժօգնություն ստանալու հնարավորությունը դեռևս ցածր է: Կուտակված խնդիրների լուծման համար առաջնահերթ նշանակություն ունի.

• պարտադիր և կամավոր բժշկական ապահովագրական համակարգի ներդրումը, որը հնարավորություն կտա բնակչությանը ստանալ լիարժեք և երաշխավորված բուժօգնություն,

- բուժաշխատողների աշխատավարձերի շարունակական բարձրացումը և անցումը բժիշկների վարձատրման նորարարական եղանակների,
- առողջապահության մեջ պրոֆիլակտիկ ուղղության զարգացումը,
- ժամանակակից բժշկական մասնագիտացված կենտրոնների ստեղծումը՝ հագեցված բարձր տեխնոլոգիական սարքավորումներով,
- մայրության, մանկության և ընտանիքի առողջության ապահովմանն ուղղված համալիր ծրագրերի մշակումը և իրականացումը,
- բուժաշխատողների համար սոցիալական արտոնությունների համակարգի ձևավորումը:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխարհի առավել զարգացած մայրաքաղաքներում առաջնահերթ կարևորվում են բնապահպանական խնդիրները, մինչդեռ մեզանում բնությունը դիտարկվում է որպես շահագործման օբյեկտ: Վերջին շրջանում մտահոգիչ են դառնում անբարենպաստ բնապահպանական միջավայրի հետ կապված շնչառական և մաշկային հիվանդությունները: Իրավիճակի շտկման համար անհրաժեշտ է.

- Երևանի բնապահպանական հայեցակարգի մշակում և ընդունում,
- կանաչ տարածքներում չհիմնավորված կառուցապատման դադարեցում,
- քաղաքային այգիների և զբոսանքի վայրերի բարեկարգում,
- ջրային ռեսուրսների խնայողական օգտագործման մեխանիզմների մշակում և ներդրում,
- կենցաղային թափոնների վերամշակման ձեռնարկություններին ստեղծում՝ բնապահպանական նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ,
- կանաչ տարածքների, անտառածածկույթով հարուստ վայրերի անխնա օգտագործման համար պատասխանատվության խստացում,
- ծառատունկի կազմակերպմամբ ընդլայնել կանաչ տարածքները:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Երևանի արտաքին տեսքի, երևանցու հարմարավետ ապրելակերպի, մայրաքաղաքում գործող ենթակառուցվածքների զարգացման համար անհրաժեշտ է մշակել և իրականացնել քաղաքի բարեկարգման և ասֆալտապատման, բնակելի շենքերի ամրացման և վերանորոգման ամբողջական նպատակային ծրագիր: Այս խնդիրների լուծման համար առաջարկում ենք.

- անձնագրավորել մայրաքաղաքի շենքերն ու փողոցները, գույքագրել խնդիրները և սահմանել դրանց լուծման համար հստակ ժամկետներ ու պատասխանատուներ,
- ապահովել քաղաքի փողոցների ու նրբանցքների լուսավորումը,
- ասֆալտապատել ոչ միայն գլխավոր, այլև երկրորդական փողոցները, վերանորոգել բազմաբնակարանային շենքերը,
- լուծումներ գտնել վթարային և քանդման ենթակա բազմաբնակարանային շենքերի բնակիչների համար,
- հատուկ ուշադրություն դարձնել քաղաքի ծայրամասային փողոցների և թաղամասերի բարեկարգմանը.
- աջակցել ենթակառուցվածքային նշանակություն ունեցող համալիրների ստեղծմանն ու զարգացմանը քաղաքի բոլոր թաղամասերում:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքում առկա բնակարանային ֆոնդը հիմնականում գտնվում է անմխիթար վիճակում: Անբարեկարգ են շենքերի մուտքերը, տանիքները, միջբակային տարածքները: Բազմաթիվ բակերում բացակայում են հանգստի գոտիներն ու խաղահրապարակները: Այս ոլորտում առաջարկվում է.

- բազմաբնակարանային շենքերի բարեկարգման աշխատանքների ծրագրավորման իրականացում,
- բազմաբնակարանային շենքերի տանիքների և ջրհորդանների հիմնովին վերանորոգում,
- բազմաբնակարանային շենքերի մուտքերի վերանորոգում, մուտքային դռների թվային ցուցիչով ավտոմատ բացվող համակարգի ներդրում,
- բազմաբնակարանային շենքերի աղբատար խողովակների և զետեղարանների (բունկեր) վերանորոգում և պարբերաբար քիմիական լվացում,
- բազմաբնակարանային շենքերի բակերի ծառերի էտման աշխատանքների իրականացում,
- բազմաբնակարանային շենքերի վրա փողոցների և շենքերի հասցեների ցուցանակների պատրաստում և ամրացում,
- վերելակների վերանորոգման համայնքային համալիր ծրագրերի մշակում և իրականացում, այդ աշխատանքներին մշտական ուշադրության ցուցաբերում,
- գլխավոր փողոցներում տեղադրված կենցաղային աղբարկղերի վերացում,
- երկրորդական փողոցների և բակային լուսավորության իրականացում,
- բնակչության և սպասարկող մեքենաների (ջրի, գազի, աղբահանության և այլ ոլորտներում) հարաբերությունների հստակեցում և կանոնակարգում,
- բնակելի շենքերի բակերում կանաչ գոտիների ձևավորում, տարեցների համար զրուցարանների տեղադրում, մանուկների համար խաղահրապարակների ստեղծում,
- բնակչության սպասարկման վարձերի գանձման գործընթացի կանոնակարգում՝ հիմք ընդունելով այն սկզբունքը, որ մարդիկ պետք է վճարեն միմիայն մատուցված ծառայությունների դիմաց,
- բարձրահարկ շենքերում ջրի շուրջօրյա մատակարարման հարցի հիմնովին լուծում,
- աղբահանության վիճակի բարելավում, աղբարկղերի քանակի ավելացում, միաժամանակ հետամուտ լինելով, որ դրանք տեղադրվեն բնակելի շենքերից որոշակի հեռավորության վրա, պահպանելու համար շենքերի սանիտարական վիճակը:

ՍԱՍՆԱՎՈՐ ՍԵԿՏՈՐ

Երևան քաղաքում բնակիչներին բնակարաններով ապահովելու հիմնախնդրի լուծման գործում մեծ դեր հատկացնել մասնավոր բնակարանային շինարարության ընդլայնմանն ու զարգացմանը:

Այդ նպատակով առաջարկվում է.

- ապահովել առանձնատների կառուցման համար համապատասխան հողատարածքների անարգել հատկացումը,
- առանձնատների կառուցման գործում ապահովել քաղաքացիներին հիպոթեքային և ցածր տոկոսադրույքով երկարաժամկետ վարկերի տրամադրումը,
- ապահովել նորակառույց առանձնատների ընդհանուր գազային ցանցին, ջրատարերին և կոյուղագծերին միացումը,
- իրականացնել բնակելի առանձնատների հոծ կառուցապատման տարածքներում դպրոցների, մանկապարտեզների և պոլիկլինիկաների կառուցումը,
- ավարտել բնակիչների առանձնատների նախագծային հատակագծերից դուրս կառուցված կից շինությունների և կառույցների օրինականացումը,
- իրականացնել բնակիչների ավտոտնակների տեղադրման համար հողհատկացումները,
- իրականացնել առանձնատների կառուցման համար բնակիչներին անհրաժեշտ շինանյութերի և շինարարական տեխնիկայի տրամադրումը, այդ առանձնատների նախագծային-նախահաշվային փաստաթղթերի կազմումը և ձևակերպումը:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՍՓՅՈՒՌՔ

Բազմաթիվ երկրների մայրաքաղաքներ նաև ակտիվ արտաքին շփումներ ունեն միմյանց հետ, ինչն էապես նպաստում է քաղաքային ենթակառուցվածքների զարգացմանը, տնտեսական, մշակութային երկխոսության ակտիվացմանը, քաղաքային կառավարման ոլորտում առաջավոր փորձի փոխանակմանը: Երևանի դեպքում այն առավել քան կարևորվում է՝ հաշվի առնելով բազմամիլիոն սփյուռքի առկայությունը: Այս առումով առաջարկում ենք.

- տարեցտարի ընդլայնել Երևանի միջազգային կապերը՝ դրանք ծառայեցնելով մայրաքաղաքի զարգացմանը և միջազգային ասպարեզում հեղինակության բարձրացմանը,
- ստորագրել համագործակցության համաձայնագրեր աշխարհի առավել զարգացած երկրների մայրաքաղաքների հետ,
- ստեղծել Երևան - Սփյուռք հարաբերությունները համակարգող ստորաբաժանում քաղաքապետարանում,
- խրախուսել և ըստ ամենայնի պաշտպանել սփյուռքահայերի ցանկությունը՝ Երևանում ներդրումներ կատարելու ուղղությամբ, սահմանել նրանց օրինական իրավունքների և շահերի պաշտպանության գործում մեխանիզմներ,
- ձևավորել ընդհանուր տեղեկատվական դաշտ աշխարհի հայաշատ քաղաքների միջև:

Երևանը պետք է աջակցի համասփյուռ հայությանը լեզվի պահպանման և ուսուցման, հայոց լեզվի և պատմության սփյուռքահայ մասնագետների պատրաստման, բուհերում սփյուռքահայ ուսանողների քանակի ավելացման հարցերում՝ այս ճանապարհին որպես առաջին քայլ Երևանում ստեղծել «Էլեկտրոնային համալսարան», որը կարող է նորագույն տեխնոլոգիաների հիման վրա դառնալ Երևան-Սփյուռք կապերի ամրապնդման կարևորագույն օղակ:



Սիրելի երևանցիներ

Երևան քաղաքի ավագանու ընտրությունները մի լուրջ փուլ են, ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ մեր երկրի համար: Դրանով է պայմանավորված քաղաքի հետագա զարգացումը, քաղաքացիների կենսամակարդակի բարձրացումը, նրանց բարեկեցության ապահովումը: Խնդիրներ, որոնք մշտապես հուզել են մարդկանց և, որոնք դեռևս չեն ստացել իրենց արժանի լուծումը: Քաղաքը կարիք ունի ռազմավարական, միջազգային չափանիշներին համապատասխան կառավարման նոր համակարգի ներդրման:

Լուրջ հիմնախնդիրներ կան գրեթե բոլոր բնագավառներում՝ քաղաքաշինության, քաղաքային տնտեսության, տրանսպորտի և կապի, սոցիալական, կրթական, առողջապահական ոլորտներում, պատշաճ մակարդակի պետք է բերել կոմունալ ծառայությունների համակարգը: Այս մտահոգությամբ է այսօր «Օրինաց երկիրը» մասնակցում ընտրություններին, ներկայացնում բարեփոխումների իր ծրագիրը:

Մենք համոզված ենք, որ Երևանը կարող է և պետք է իր արժանի տեղը գրավի աշխարհի լավագույն մայրաքաղաքների շարքում, ինչին և նպատակաուղղված է ներկայացվող ծրագիրը, որը ռազմավարական է, կենսունակ, իրատեսական և միտված է այդ խնդիրների կարգավորմանը: Ես ուզում եմ հատկապես շեշտել ընտրացուցակը գլխավորող Հեղինե Բիշարյանի անունը, ով անցած քաղաքական ճանապարհով, նվիրվածությամբ, բարձր ինտելեկտով և ամենադժվարին խնդիրները լուծելու կարողությամբ, ի զորու է քաղաքը դուրս բերել զարգացման նոր փուլ: Գիտական, կազմակերպչական, ինտելեկտուալ մեծ ներուժ ունեն նաև հանրապետությունում հայտնի այարդաբան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Բակունցը, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գրիգորի Վահանյանը և ցուցակում ընդգրկված մյուս թեկնածուները:

Սիրելի հայրենակիցներ, «Օրինաց երկիրն» անցել է փորձություններով լի ճանապարհ, մենք ունեցել ենք դժվարություններ և գիտենք, թե ինչպես պետք է դրանք հաղթահարել, մեր պայքարը եղել է հանուն նոր, բարեկեցիկ մի երկրի, որտեղ չպետք է ոտնահարվեն մարդկանց իրավունքները, որտեղ պետք է իշխեն օրենքն ու օրինականությունը, որտեղ մարդ կունենա աշխատանք և իր աշխատանքով իր ընտանիքը պահելու հնարավորություն:

Մենք սիրում ենք մեր Երևանը՝ համայն հայության մայրաքաղաքը և լի ենք այն իր կոչմանն արժանի հանգրվան տեսնելու վճռակամությամբ, որտեղ յուրաքանչյուր երևանցի կապրի բարեկեցիկ և ապահով՝ վստահ իր և իր զավակների ապագայի նկատմամբ:

Մայիսի 31-ին ընտրություններ են: Ես կոչ եմ անում բոլոր համաքաղաքացիներին ընտրություն կատարել խղճի մտոք և ընտրել նրանց ում հավատում եք, ընտրել նրանց ում վստահում եք:

Արթուր ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«Օրինաց երկիր» կուսակցության նախագահ,
ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար,
իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

Սիրելի երևանցիներ՛ը, քույրե՛ր և եղբայրնե՛ր

Մեր նախընտրական ծրագրերի իրականացման դեպքում ակնկալվում են առնվազն հետևյալ արդյունքները.

- ✓ Երևանը մրցակցայնության չափանիշներով տեղ կգրավի աշխարհի 50, գիտատար տնտեսության ցուցանիշներով՝ 40, իսկ մշակութային ժառանգության, պատմական հուշարձանների և արվեստի ցուցանիշներով՝ 30 առաջատար քաղաքների շարքում,
- ✓ սոցիալական ապահովության և մարդկային զարգացման բոլոր հիմնական ցուցանիշներով Երևանը կունենա միջազգային չափանիշներին բավարարող դիրքեր,
- ✓ մայրաքաղաքում հասարակական կարգ ու կանոնի պատշաճ պահպանման պարագայում երևանցին կլինի օրենքով և իրավունքով պաշտպանված,
- ✓ կրթության, առողջապահության, գիտության նոր տեխնոլոգիաների բնագավառներում Երևանը տարածաշրջանում կդառնա առաջատար քաղաքներից մեկը,
- ✓ մայրաքաղաքում անարգել կզարգանա փոքր և միջին ձեռնեռեցությունը,
- ✓ նվազագույնի կհասնի չքավորության աստիճանը, իսկ սոցիալապես անապահով խավերը կստանան արժանապատիվ ապրելու համար բավարար նպաստներ,
- ✓ Երևանը տարածաշրջանում կվերածվի մշակույթի, արվեստների, համալսարանական կենտրոնի և գիտելիքներ արտահանող երկրի մայրաքաղաքի,
- ✓ քաղաքապետարանի ակտիվ մասնակցությամբ կստեղծվեն նոր աշխատատեղեր, յուրաքանչյուր տարի կավելանա դրանց թիվը,
- ✓ երիտասարդ ընտանիքների համար կմշակվեն բնակարանային ապահովման պետական և մունիցիպալ շինարարություն իրականացնող ծրագրեր, շահավետ, երկարաժամկետ ցածր տոկոսադրույքներով հիփոթեքային հիմնադրամների ստեղծման և վարկավորման ճանապարհով,
- ✓ կիրականացվի Երևանի ամբողջ տարածքի տեղեկատվայնացումը և կոմպյուտերիզացումը, մայրաքաղաքի դպրոցներում գործընթաց կսկսվի, որպեսզի առաջին դասարանից բոլոր երեխաները սովորեն աշխատել համակարգչով և տիրապետեն երկու օտար լեզուների,
- ✓ կառավարման արդյունավետ եղանակների ներդրման միջոցով կբարձրացվեն քաղաքային կառավարման համակարգի աշխատողների աշխատավարձերը,
- ✓ Երևան քաղաքի իրական տիրոջ իրավունքները կվերադարձվեն երևանցիներին, մայրաքաղաքը կվերափոխվի և կդառնա մեկ խոշոր սոցիալ-տնտեսական մեգապոլիս, իսկ քաղաքապետարանը լիարժեքորեն կստանձնի այն ղեկավարելու պարտականությունները, իրավունքները և պատասխանատվությունը,
- ✓ Երևանը կդառնա հանգիստ և ապահով քաղաք՝ զբոսանքի և հանգստի համար,
- ✓ Երևանում ծնվելը և նրա քաղաքացի լինելը կդառնա ոչ միայն պատվավոր, այլև որպես համայն հայության մայրաքաղաք՝ բարեկեցության տեսանկյունից նաև շահավետ: Սա նշանակում է, որ մայրաքաղաքի նոր ռազմավարական սոցիալ-տնտեսական զարգացման և կառավարման հայեցակարգի ներդրման միջոցով համաշխարհային տնտեսական և ֆինանսական ճգնաժամի պայմաններում հնարավոր կլինի ապահովել մայրաքաղաքի արդյունավետ կառավարման նորարարական եղանակներ: Կբարձրանա երևանցու բարեկեցության մակարդակը:

ԻՍԿ ԻՆՉՈ՞Ւ ՈՉ ԿԻՆ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ԵՐԵՎԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԵՐ ԹԻՄԻ ԱՌԱՋԻՆ ԵՌՅԱԿԸ



«Օրինաց երկիր» կուսակցության փոխնախագահ, Ազգային ժողովի պատգամավոր, Ազգային ժողովի «Օրինաց երկիր» խմբակցության ղեկավար

Հեղինե ԲԻՇԱՐՅԱՆ



Բժշկագիտության դոկտոր, պրոֆեսոր, Առողջապահության Ազգային ինստիտուտի անգիոնևրոլոգիայի ամբիոնի վարիչ, «Նաիրի» բժշկական կենտրոնի նևրոլոգիայի ծառայության ղեկավար

Հենրիկ ԲԱԿՈՒՆՑ



Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Սահմանադրական դատարանի խորհրդական, Ռուս-հայկական Սլավոնական համալսարանի պրոֆեսոր

Գրիգորի ՎԱՀԱՆՅԱՆ

Օրինաց երկիր

կուսակցություն



Նախընտրական ծրագիր

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ